Office of Sustainability

consider the environment BE FOODWARE AWARE

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Միանգամյա օգտագործման սննդի պարագաների բաշխումը կարգավորող որոշումն ուժի մեջ է մտնում **2022** թվականի փետրվարի **11**-ից:

Միանգամյա օգտագործման սննդի պարագաները ներառում են՝

- սպասք
- համեմունքների փաթեթներ
- մեկանգամյա օգտագործման ձողիկներ
- խառնիչներ
- տաք հեղուկով բաժակի կափարիչի ձողիկներ
- կոկտեյլի ձողիկներ
- ատամի չոփեր
- անձեռոցիկներ
- խոնավ անձեռոցիկներ
- բաժակի կափարիչներ
- բաժակի թղթյա շապիկներ
- ըմպելիքների տակդիրներ

Դրույթներ

2022 թվականի փետրվարի 11-ից սկսած՝ սննդի և խմիչքների մեծ հաստատությունները՝

- Կարող են մեկանգամյա օգտագործման սննդի պարագաներ տրամադրել միայն ներսում ճաշող և սնունդն իրենց հետ տանող հաճախորդներին՝ ըստ պահանջի:
- Պետք է ցուցադրեն «Գլենդելի քաղաքապետարանի միանգամյա օգտագործման սննդի պարագաների բաշխման կարգադրության՝ հաճախորդների խորհրդատվական ծանուցումը» (տես հակառակ կողմը):
- Կարող են հարցնել մեքենայով և առաքման տարբերակով պատվերը վերցնող հաճախորդներին, թե արդյոք ցանկանում են մեկանգամյա օգտագործման սննդի պարագաներ:
- Կարող են տրամադրել բաժակի թղթյա շապիկներ նբաժակի կափարիչներ՝ մեքենայով, պատվերը իրենց հետ վերցնող կամ առաքումով հաճախորդներին, եթե նրանք տաք ըմպելիք են պատվիրում:

2022 թվականի մարտի 13-ից սկսած՝ Քաղաքում սննդի և խմիչքի բոլոր հաստատությունները՝

- Պետք է օգտագործեն առցանց պատվերների հարթակ՝ «ընտրելու» / «opt-in» գործառույթով, որպեսզի հաճախորդները ձեռք բերեն մեկանգամյա օգտագործման սննդի պարագաներ:
- Չեն կարող տրամադրել միանգամյա օգտագործման սննդի պարագաներ, եթե դրանք չեն պահանջվել «opt-in» գործառույթի միջոցով:

Բացառություններ՝

- Բոլոր առողջապահական հաստատությունները և տարեցների համար նախատեսված բնակելի խնամքի հաստատությունները, ինչպես սահմանված է Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1250 և 1569.2 բաժիններում, ազատված են վերը նշված դրույթներից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Գլենդելի քաղաքապետարան՝ Կայունության գրասենյակ՝ **www.Glendaleca.gov/sustainability** հասցեով, կամ զանգահարեք **(818) 548-3351** հեռախոսահամարով:

ՀԱՇՎԻ՛ ԱՌԵՔ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուշադի՛ր եղեք մեկանգամյա օգտագործման սննդի պարագաների նկատմամբ



Միայն ըստ պահանջի՝

- Սպասք
- Համեմունքներ
- Անձեռոցիկներ
- և այլ մեկանգամյա օգտագործման սննդի պարագաներ

Մենք կցանկանայինք լսել ձեր կարծիքը: Մասնակցեք Գլենդել քաղաքում մեկանգամյա օգտագործման պլաստմասե իրերի արգելքի ընդլայնման վերաբերյալ մեր հարցմանը՝

www.Surveymonkey.com/r/FoodwareSurvey

@Glendalesustainability

City of Glendale, Office of Sustainability
(818) 548-3351
www.Glendaleca.gov/sustainability